

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՄԱԼՅԱ ՈԱՖԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՒՆԻՄԱՍՏՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ

Ժ.02.08 - «ՈՒՍԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ» ՍԱՆՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գլխավորական ղեկավար՝ մ.գ.թ., դոցենտ Ջ.Հ. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Բարլեզիզյան
բ.գ.թ., դոցենտ Ռ. Մելիքսեթյան


Առաջատար կազմակերպություն՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. դեկտեմբերի 26-ին, ժամը 11:00-ին ՀՀ ԲՈՂ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքվել է 2014թ. նոյեմբերի 26-ին:

Մասնագիտական խորհրդի
գլխավորական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

Հայտնի է, որ ամեն լեզու յուրովի է արտահայտում և մեկնաբանում արտա-լեզվական աշխարհն՝ իր պատմամշակութային բազմազանությամբ, ինչը, մասի և առաջ, տեղի է ունենում բառամիավորների միջոցով: Լեզվի այս ենթահամա-կարգում իրենց ուրույն տեղն ունեն գունանուններն ու գունանվանական կա-ռույցները՝ որպես աշխարհի լեզվական պատկերի կորևորագույն տարրեր: Նշյալ կարևորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այս-պես, արտալեզվական աշխարհը բազմազան է՝ իր անսահմանափակ գունե-րանգներով, որոնց միայն որոշակի քանակն է անվանվում լեզվում: Գույներն ազդում են մարդու հոգեկան աշխարհի վրա՝ առաջացնելով բազմաբովանդակ հույզեր ու գուգորդումներ /ստոցիացիաներ/, որոնք էլ, իրենց հերթին, ընդլայնում են գունիմաստի կառուցվածքի սահմանները՝ առաջ բերելով վերացական հասկացություններ:

Գունանունների հավելիմաստները /այդ թվում նաև խորհրդանշական/ ու-նեն ազգային պատկանելություն, քանի որ ամեն մի լեզվամշակույթ յուրակերպ է հատվածավորում, անվանում և արժևորում արտալեզվական աշխարհը: Ուրեմն կարելի է պնդել, որ գունանունների ուսումնասիրությունը կարող է ինչ-որ առու-մով, տվյալ ազգի պատմության, մշակույթի, մտածողության և հոգեբանության ուսումնասիրության մաս կազմել: Սրանով է նշագծվում գունանունների՝ որպես հետազոտական լեզվանյութի եզակիությունն ու կարևորությունը: Նշյալ հանգա-մանքով է պայմանավորված նաև այն, որ սկսած հնագույն ժամանակներից /Պլատոն, Արիստոտել/ գիտնականների ուշադրությունը խնդրո առարկա լեզ-վանյութի հետազոտման նկատմամբ ոչ թե նվազում, այլ մեծանում է: Այդ մասին են վկայում վերջին տասնամյակներին լույս տեսած բազում լեզվաբանական աշխատությունները:

Դրանք այնքան մեծ քանակ են կազմում, որ գրեթե անհնարին է դառնում դրանց ամբողջական թվարկումը և դասակարգումը այս կամ այն սկզբունքի հի-ման վրա: Կարևորն այն է, որ դրանց զգալի մասում, բուն լեզվական նյութի ա-ռանձնահատկությունների ուսումնասիրությունը հիմք է ծառայում ոչ միայն լեզ-վաբանական, այլև հոգեբանական, մշակութաբանական, թարգմանագիտա-կան, գրականագիտական խնդիրների լուծման համար (ինչպես օրինակ, հոգելեզվաբանական գիտավործի անցկացման [Յանշին Պ.Վ.], բառային միավորների իմաստային փոխհարաբերությունների հետազոտական մեթոդնե-րի մշակման [Кацнельсон С.Д., Фрумкина Р.М.], լեզվի պատմության [Բորադի-նա Մ.Ա., Գակ Վ.Գ., Բախիլինա Ն.Բ.], լեզվի և մտածողության [Շենյակին Ֆ.Ն., Saunders B.], թարգմանության տեսական խնդիրների մշակման [Mounin G.], լեզուների զուգադրական վերլուծությունների [Վասիլիկչ Ա.Պ., Կուլայինա Վ.Գ.], գեղարվեստական տեքստերում արտահայտամիջոցների համակարգման [Լո-պարին Վ.Վ., Բրագինա Ա.Ա.], հոգեբանության [Lusher M.] և այլն):

Ռոմանական բանասիրության ոլորտում, արժանահիշատակ են Կ. Ժոնենի, Ա. Նոայիի, Շ. Մոլինիեի, Ա.Մ. Գեֆուրիի աշխատությունները, որոնցում քննու-թյան են առնվում գունանունների իմաստային, կառուցվածքային, բառաշարահ-յուսական առանձնահատկությունները միջմշակութային հարորդակցության հա-մաստեքստում [Jonin C., Noailly A., Molinier Ch., Desfour A.M.]:

Այսպիսով կարելի է փաստել, որ գունանունների լեզվական առանձնահատկությունների հետազոտումը առանցքային նշանակություն է ունեցել համալիր ուսումնասիրության տիրույթում: Նման մոտեցումը այն աստիճան է կատարվել, որ անգամ առաջ է քաշվել «գույնի լեզվաբանություն» հասկացությունը: Մի շարք հետազոտողներ գույնի լեզվաբանությունը համարում են ժամանակակից լեզվաբանության մի առանձին գիտաճյուղ՝ հիմք ընդունելով այն տեսական և մեթոդաբանական դրույթները, որոնք ձևավորվել են գունանունների և գունանվանական կառույցների բազմակողմ ուսումնասիրությունների արդյունքում [Кульпина В., Байрамова Л.]:

Ինչո՞վ է պայմանավորված գիտնականների այս անսպառ հետաքրքրությունը խնդրո առարկա լեզվական միավորների նկատմամբ: Մեր կարծիքով, նախ և առաջ, *գույն* երևույթի էությունական հատկանիշների յուրակերպությամբ, որոնց ուսումնասիրության արդյունքում բացահայտվում են այն խորքային փոխհարաբերությունները, որոնք առկա են լեզվի և մտածողության, լեզվի և հոգեբանության, լեզվի և մշակույթի միջև՝ տվյալ լեզվահանրությամբ:

Նշյալ փոխներագրող և փոխկապակցված իրողությունները գիտահետազոտական առաջնաբեմ են մղում գույն-գունընկալում-գունանվանում-գունիմաստ քառանդամը որպես հետազոտական քառաբաղադրիչ օբյեկտ, որի հիմնական բաղադրիչը, լեզվաբանության տեսանկյունից, մեր կարծիքով, գունիմաստն է: Այս առումով բավական է նշել այն փաստը, որ տարբեր լեզուների գունիմաստների փորձարարական հետազոտության արդյունքում ձևավորվել է երկու իրարամերժ լեզվաբանական տեսություն՝ լեզվական հարաբերականության և լեզվական համընդհանրության:

Վերը շարադրված դատողություններից ակնհայտ է դառնում, որ գույն-գունընկալում-գունանվանում-գունիմաստ քառաբաղադրիչ հետազոտական օբյեկտը դեռ չի կորցրել իր *կենսունակությունը*, մասնավորապես, առնվազն երկու լեզուների ամբողջական կամ մասնակի գուգադրման պայմաններում: Այլ կերպ ասած, տվյալ լեզվի գունիմաստների /հավելիմաստների/ լեզվական դրսևորումների ուսումնասիրությունը մեկ այլ լեզվի համարժեք երևույթների հետ, թեկուզ և մասնակի գուգադրմամբ, արդեն իսկ կարելի է **արդիական** համարել: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ գունիմաստի համակողմանի քննությունը այսօր նաև լեզվամշակութաբանական արժեք ունի և պահանջված է լեզվաբանության ժամանակակից այնպիսի ուղղությունների համատեքստում, ինչպիսիք են պոաքսեմատիկան, գործաբանությունը, ճանաչողական լեզվաբանությունը և գուգադրական լեզվաբանությունը:

Ուստի, մեր աշխատանքի **նպատակն է** համակողմանի վերլուծության ենթարկել ժամանակակից ֆրանսերենի գունիմաստների /հավելիմաստների/ լեզվական դրսևորումները լեզվի և խոսքի մակարդակներում:

Լեզվի մակարդակ ասելով նկատի ունենք գունանունների այն հավելիմաստները, որոնք տվյալ լեզվի բառահամակարգի մաս են կազմում և արձանագրված են համապատասխան բառարաններում:

Գունանունների այն հավելիմաստները, որոնք առկա են տարբեր գործառական ոճերին պատկանող տեքստերում /քաղաքական, հրապարակախոսական,

գեղարվեստական, գիտական/ և պայմանավորված են համատեքստով, դիտվում են որպես խոսքի մակարդակի երևույթներ:

Լեզվի մակարդակում գունանունների և գունանվանական կառույցների իմաստների և հավելիմաստների ուսումնասիրությունը կատարվում է հայերենի համարժեք երևույթների զուգադրմամբ, քանի որ խնդրո առարկա լեզվական երևույթները նշյալ մակարդակում երկու լեզվական համակարգերի կողմից ամրագրված կայուն միավորներ են, ինչը չի կարելի ասել խոսքի մակարդակի մասին: Այս մակարդակում զուգադրումը առնչվում է առավելապես թարգմանաբանության խնդիրների հետ, ինչը դուրս է մեր հետազոտական հետաքրքրությունների շրջանակից:

Գունիմաստների/հավելիմաստների/ լեզվական դրսևորումների քննությունը այս երկու մակարդակներում հնարավորություն է ընձեռում վեր հանելու դրանց առաջացման և փոփոխության հարավարգացումը /դինամիկան/, ինչպես նաև պատասխանելու լեզվաբանական կարևորություն ունեցող հետևյալ հարցին. ժամանակակից գործածություններում գունանունները պահպանում են արդյոք իրենց հիմնական, զուգորդային հավելիմաստները, թե ենթարկվում են որոշակի փոփոխությունների, և վերջապես, ձևավորվում են արդյոք գունանվանական նոր կառույցներ:

Հիմնական նպատակի հետ կապված առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները**.

- պարզաբանել *գույն* հասկացության գիտական ըմբռնման տարակարծությունները,
- քննության առնել գունընկալման և գունանվանման փոխհարաբերությանը վերաբերող հարցերը լեզվաբանական տեսություններում,
- համառոտ կերպով տարբրոշել գունանունների դերը աշխարհի լեզվական պատկերի կոնցեպտուալ համակարգում,
- զուգադրական վերլուծության ենթարկել հիմնական գունանունների /սև, սպիտակ, կարմիր, կապույտ, կանաչ, դեղին/ իմաստային կառուցվածքները և իմաստակազմավորման պատճառաբանվածությունը ֆրանսերենում և հայերենում,
- դասակարգել ֆրանսերենի հիմնական գունանունները իմաստաձևաբանական տեսանկյունից,
- վերլուծության ենթարկել գունանունների և գունանվանական կառույցների իմաստները, հավելիմաստները լեզվի և խոսքի մակարդակներում:

Հետազոտության **նյութ** են ծառայել ֆրանսերեն և հայերեն հեղինակավոր բառարաններից, ինչպես նաև գեղարվեստական, գիտական և հրապարակախոսական տեքստերից քաղված գունանուններն ու գունանվանական կառույցները:

Վերլուծության մեթոդները: Ուսումնասիրության մեջ առաջ քաշված խնդիրների լուծման համար կիրառվել են նկարագրական, բառարանային բացատրությունների, բաղդատական վերլուծության և միջլեզվական զուգադրման մե-

թողները: Խոսքի մակարդակում, առավել խորքային վերլուծության նպատակով, կատարվել է նաև համատեքստային վերլուծություն:

Հետազոտության **գիտական նորույթն** այն է, որ ժամանակակից ֆրանսերենի հիմնական գունանուններն ու գունանվանական կառույցները իմաստաբանական վերլուծության են ենթարկվում թե՛ լեզվի, թե՛ խոսքի մակարդակում, ընդ որում լեզվի մակարդակում հայերեն համարժեք երևույթների զուգադրմամբ: **Առաջին անգամ** ֆրանսերեն հիմնական գունանունների դասակարգման փորձ է արվում իմաստաձևաբանական տեսանկյունից:

Գիտական նորույթում արժարժված խնդիրներն արդեն որոշակի **տեսական արժեք** են ներկայացնում, քանի որ լեզվական երևույթների դասակարգումն ինքնին պատկանում է լեզվի տեսական ըմբռնման ոլորտին: Աշխատանքում տեղ գտած մի քանի մեկնաբանություններ, վերլուծություններ և եզրակացություններ կարող են իրենց ներդրումն ունենալ բառարանագիտական, մշակութաբանական և թարգմանաբանական մի շարք տեսական խնդիրների լուսաբանման մեջ, մասնավորապես ֆրանսերեն-հայերեն գունանունների բառարանի ստեղծման տեսական սկզբունքների մշակման գործում:

Գործնական արժեքն այն է, որ հետազոտության արդյունքները կարող են տեղ գտնել բառագիտությանը, մշակութաբանությանը և թարգմանաբանությանը վերաբերող բուհական դասընթացներում, սեմինար պարապմունքներում և համապատասխան ձեռնարկներում, իսկ հետազոտական լեզվական նյութը կարող է հիմք դառնալ ֆրանսերեն-հայերեն գունանունների բառարանի ստեղծման համար:

Աշխատանքի կառուցվածքը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ /երկուական ենթագրոլիսներով/, եզրակացությունից, գրականության ցանկից և հետազոտական լեզվակազմի աղբյուրների ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության թեման և հիմնահարցերը, հիմնավորվում են կատարված հետազոտության նորույթն ու արդիականությունը, նշագծվում են ատենախոսության նպատակն ու խնդիրները, ներկայացվում է հետազոտության փաստական լեզվանյութը, նկարագրվում է աշխատանքի մեթոդաբանական հիմքը, փաստարկվում են ուսումնասիրության տեսական և գործնական արժեքները:

Առաջին գլուխը՝ «Գույնը և գունանվանումը գիտական հարացույցում», բաղկացած է երեք ենթագլխից՝ «Գույն» հասկացության գիտական ըմբռնման հարազարգացումը», «Գունընկալման և գունանվանման փոխհարաբերության խնդիրը լեզվաբանական տեսություններում» և «Գույներն աշխարհի լեզվական պատկերի կոնցեպտուալ համակարգում»: Այս գլխում հանգամանորեն ուսումնասիրվում և վերլուծվում են *գույն* երևույթի գիտական ըմբռնման, գունընկալման և գունանվանման լեզվահոգեբանական փոխհարաբերության և գունանունների ճանաչողական ներուժին առնչվող տարաբնույթ առանցքային հարցեր, որոնք ծառայում են որպես տեսական և մեթոդաբանական հիմք ատենախոսության հաջորդ երկու հետազոտական գլուխների համար:

Գույնի՝ որպես պատմամշակութային և լեզվահոգեբանական երևույթի գիտական ըմբռնումը բավականին դժվար ճանապարհ է անցել: Այն մշտապես հայտնվել է ամենատարբեր գիտաճյուղերի ուշադրության կենտրոնում /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, մարդաբանություն, հոգեբանություն, պատմափիլիսո-

փայտություն, մշակութաբանություն/։ *Գույն* երևույթի հետազոտության արդյունքները նշյալ գիտաճյուղերի կողմից շատ դեպքերում եղել են իրարամերժ և կրել են վարկածային բնույթ, ինչը, նախ և առաջ, պայմանավորված է խնդրո առարկայի էութենական բազմակողմ և տարաբովանդակ հատկանիշներով։ Գունամունը և գույնը, որպես ձևի և բովանդակության փոխհարաբերություն, առնչվում են թե՛ ֆիզիկական, թե՛ կենսաբանական, թե՛ հոգեբանական, թե՛ մշակութաբանական և թե՛ լեզվաբանական խնդիրներին։

Առանցքային է համարվել հատկապես հետևյալ հարցը. իրականում գույնե-րը, որպես ֆիզիկական երևույթ, գոյություն ունե՞ն, թե դրանց ընկալումը պայմանավորված է գուտ կենսաբանական գործոններով։ Ժամանակակից գիտության տվյալներով հաստատված է, որ մարդու զգայական օրգանները /այդ թվում նաև տեսողական/, անկախ էքնիկական պատկանելությունից, ունեն նույն կենսաբանական կառուցվածքը։ Այստեղից հետևում է, որ աշխարհի իրերն ու երևույթները /այդ թվում նաև գույները/ նույն կերպ են արտապատկերվում մարդու գիտակցության մեջ, սակայն տարբեր լեզուներով խոսող մարդիկ տարբեր կերպ են հաստատվորում և անվանում արտալեզվական աշխարհը։ Տարբեր են նաև իրերի և երևույթների մեկնաբանման հոգեբանական և լեզվական մեխանիզմները այս կամ այն լեզվահանրություն։ Նշյալ իրողությունների փոխհարաբերությունների խնդրին են առնչվում լեզվաբանական բնույթի բազում հարցադրումներ։

Սույն գլխում արված կարևոր եզրակացություններից մեկն այն է, որ գույները չունեն կայուն և համընդհանուր նշանակություններ, վերջիններս փոփոխվում են ժամանակի և տարածության մեջ՝ վերաիմաստավորվելով տվյալ մշակույթի առանձնահատկություններին համապատասխան։ Ամեն մի մշակույթ յուրովի է ձևավորում մարդու հոգևոր և մտավոր աշխարհը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ նմուշօրինակն իրական աշխարհի՝ արտացոլված լեզվում։ Աշխարհի մտահոգևոր նմուշօրինակն ընդունված է կոչել աշխարհի լեզվական պատկեր, որում, լեզվական միավորների միջոցով, ոչ թե պատճենվում՝ այլ անվանվում և յուրակերպ մեկնաբանվում է արտալեզվական աշխարհը։

Սի շարք փիլիսոփաներ և լեզվաբաններ տարբերակում են *աշխարհի լեզվական պատկեր* և *աշխարհի կոնցեպտուալ պատկեր* հասկացությունները։ Սակայն, նրանց իսկ համոզմամբ, դրանք ոչ թե միմյանց հակասում են, այլ՝ փոխլրացնում։ Այդ իսկ պատճառով աշխատանքում մենք անդրադարձ ենք կատարում նաև *կոնցեպտ* հասկացության հիմնական բնութագրիչներին, որոնց օգնությամբ ավելի դյուրին է դառնում հստակեցնել և ամբողջական դարձնել աշխարհի լեզվական պատկերում գունանունների և գունանվանական կառույցների իմաստային գործառույթների նկարագիրը։

Քաղաքակրթության արևածագից սկսած, գունանուններն ու գունանվանական կառույցները, իրենց փոխաբերական, խորհրդանշանային, զուգորդային իմաստներով թափանցել են մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտներին պատկանող լեզվանյութի մեջ։ Մենք հակիրճ անդրադարձել ենք, մեր կարծիքով, մի քանի կարևոր ոլորտների՝ թելադրված մեր փաստական լեզվանյութի ծավալով և բովանդակությամբ։ Դրանք են առասպել, կրոն, պետություն, սովորույթ, կենցաղ ոլորտները, որտեղ գունանունները կարևոր դերակատարություն են ունեցել անձերի բարոյահոգեբանական, վարքագծային առանձնահատկու-

յունների ներկայացման, ինչպես նաև որոշակի իրողությունների նկարագրութ-
յան համար: Ստորև ներկայացնում ենք մի քանի օրինակ, որոնցում գունիմաստ-
ները գուգորվում են /կամ էլ խորհրդանշում/ ամենատարբեր երևույթների:

Homme vert - բնության գարթոնք, բերրիություն, գարուն

Chevalier blanc - հրաշք, բարություն, գերբնական ուժ

Royaume noir - խավար, անդրշիրիմյան կյանք

Séjour blanc - երկնային, հավիտենական կյանք

Plan rouge - վտանգ, արտակարգ իրավիճակ

Երկրորդ գլուխը «Գունանունների իմաստաձևաբանական առանձնահատ-
կությունները լեզվամշակութային հաղորդակցության համատեքստում» բաղկա-
ցած է երկու ենթագլխից՝ «Գունանունների իմաստային կառուցվածքը և պատ-
ճառաբանվածությունը» և «Գունանունների դասկարգումը իմաստաձևաբանա-
կան տեսանկյունից»: Այս գլխում անդրադարձ է կատարվում գույների ընկալ-
ման և անվանման, գունանունների և գունիմաստների քանակային փոխհարա-
բերությունների խնդիրներին տարբեր լեզվամշակույթներում:

Ժամանակակից գիտության տվյալներով, մարդը անկախ ժամանակից և
տարածությունից, ի վիճակի է ընկալելու գունաշխարհի ամսահմանափակ նրբե-
րանգների որոշակի քանակ: Մակայն, ինչպես վկայում են փորձարարական հե-
տազոտությունները, մեկ լեզվամշակույթի սահմաններում անգամ հիմնական
գույները նույն կերպ չեն ընկալվում լեզվակիրների կողմից: Այլ կերպ ասած,
նույն գունանունը կարող է գործածվել միևնույն գունակարգին պատկանող
տարբեր առարկաների հատկանշման համար /կարմիր արև, կարմիր պոմիդոր,
կարմիր կակաչ, կարմիր արյուն և այլն/: Այսպիսով, հիմնական գույներից յու-
րաբանչյուրն ունի արդյոք ընկալման մեկ համընդհանուր նմուշ /իրական կամ
վերացական վերաբերյալ/: Այս իրողությունից դրոշված, որոշ հետազոտողներ
հիմնական գույներն անվանում են վերացարկված գույներ, որոնց անվանումնե-
րին հատուկ է անսահմանափակ կապակցելիություն և ռճական չեզոքություն:

Հայտնի է, որ լեզվական անվանումը, կամ նույնն է թե հասկացության կազ-
մավորումը, տեղի է ունենում տվյալ առարկայի կարևորագույն հատկանիշների
վերացարկման հիման վրա: Այստեղից հետևում է, որ լեզվական համակարգում
մենք գործ ունենք բառ-հասկացությունների հետ, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ
առարկաների և երևույթների տիպական հատկանիշների ընդհանրացված, վե-
րացարկված ամբողջությունների ներկայացուցիչներ:

Մեր դեպքում ճանաչողության այդ վերացարկված առարկաները գունե-
րանգների այն ամբողջություններն են, որոնք սովորաբար անվանում ենք կար-
միր, կանաչ, կապույտ, դեղին, սև, սպիտակ: Ուրեմն կարելի է եզրակացնել, որ
բնության մեջ նշյալ գույները որպես այդպիսիք գոյություն չունեն, այլ գոյություն
ունեն միայն դրանց անսահմանափակ երանգները: Այս խնդրի շուրջ համապա-
տասխան դիտարկումների և տեսակետների քննության արդյունքում գալիս ենք
այն եզրակացության, որ հիմնական գունանունները իրականացնում են կար-
գայնացնող գործառույթ, հետևաբար, հիմնական գունանունները կարելի է դի-
տարկել որպես *կարգայնացնող* բառամիավորներ, իսկ հիմնական գույնի ե-
րանգները նշող բառամիավորները՝ *ոչ կարգայնացնող կամ ենթակարգային*:
Այսպես՝ ֆրանսերենի, *blanc* գունանունը կարգայնացնող է, իսկ նրա տարբեր ե-

րանգներն արտահայտող գունանունները՝ ենթակարգային՝ *blanc de lis, blanc cassé, blanc-neige, blanc vif, blanc lunaire*: Նույնը կարելի է ասել հայերենի գունանունների մասին. *սպիտակ՝* կարգայնացնող, իսկ *սպիտակաթույր, սպիտակավուն, ճերմակաթույր, կաթնագույն, ձյունասպիտակ, սիփ-սպիտակ՝* ենթակարգային:

Այս իրողությունը որոշակի դժվարությունների առջև է կանգնեցնում բառաբանագիրներին՝ հիմնական գունանունների սահմանումների հարցում: Ֆրանսերեն և հայերեն միալեզու բացատրական հեղինակավոր բառարանների տվյալների քննության արդյունքում գալիս ենք այն եզրակացության, որ երկու լեզուներում գունանունների սահմանման արդյունավետ ձևը վերաբերյալների մատնանշումն է:

Օրինակ՝

Rouge - qui est de la couleur du sang, du coquelicot, du rubis

Կարմիր - արյան գույն

Սահմանման այս հիմնական ձևի կողքին տեղ են գտել նաև այլ ձևեր, որոնք, իհարկե, մեծ քանակ չեն կազմում: Դրանք են՝

Այլ գունանունների մատնանշում

Bleu - entre l'indigo et le vert

Կապույտ - մանուշակագույնի և կանաչի միջև

Տիզիկական հատկանիշների նկարագրություն

Jaune - qui est d'une couleur placée dans le spectre, entre le vert et l'orangé et dont la surface offre de nombreux exemples.

Դեղին - արեգակի լուսապսակի հիմնական գույներից մեկը, որն ընկնում է նարնջագույնի և կանաչի միջև:

Գունանունների ստուգաբանության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու լեզուներում էլ գունանունների առաջացումը ծագումնաբանորեն նույնպես կապված է արտալեզվական աշխարհի տվյալ գույնը ներկայացնող կամ տվյալ գույնին գուգադրվող տիպական առարկայի, երևույթի հետ.

Օրինակ՝

blanc - փայլուն, լուսավոր

rouge - անհայտություն

vert - բնության զարթոնք, բուսականություն

bleu - գունատություն

jaune – ոսկի

սպիտակ - լույս, լուսավոր

սև - մութ, զնդան

կարմիր - կարմիր որդ

կանաչ - արտ, արտ

կապույտ - կապույտ աղավնի

դեղին - բուժիչ խոտ

Լեզվական փաստական նյութի քննության արդյունքում ակնհայտ է - դառնում, որ գունընկալումը հոգեբանորեն տեղի է ունենում որևէ կոնկրետ առարկայի կամ երևույթի *միջնորդությամբ*: Այլ հարց է, երբ խոսքը վերաբերում է

ենթակարգային գունանուններին: Այսպես, մեր կարծիքով, բավականին դժվարանում է գունընկալման, իսկ միջլեզվական համարժեքության տեսանկյունից՝ նաև թարգմանության խնդիրը, քանի որ ենթակարգային գունանունների բովանդակային պլանն ունի ազգամշակութային պատկանելություն, ինչպես օրինակ, *bleu Berlin, bleu Limoge, Monaco, Bordeau* և այլն: Նման դժվարությունների հաղթահարման ճանապարհին առաջին քայլերից մեկը կարող է համարվել ենթակարգային գունանունների դասակարգումն ըստ ձևաբանական կազմի՝ հաշվի առնելով նաև դրանց բաղադրիչների իմաստային և շարակարգային փոխհարաբերությունները: Ելնելով այս սկզբունքից՝ ենթակարգային գունանունները դասակարգել ենք երկու հիմնական խմբում.

I խումբ՝ *ածական+ածական /adjectif+adjectif/*

Այս խմբի ներսում առանձնացրել ենք երկու ենթախումբ:

Առաջին ենթախմբում ներառվել են այն գունանունները, որոնք արտահայտում են տվյալ գույնի եռաստիճան երանգներից մեկը */rouge, մուգ, վառ/*: Ֆրանսերենում գուներանգների եռաստիճանության արտահայտման համար գործածվում են մի շարք ածականներ, որոնք տվյալ շարքում հանդես են գալիս որպես հոմանիշներ: Այդ ածականներն են՝ *vif, foncé, profond, pâle, clair, brillant, tendre, riant, ardent, gai*.

Բաց գուներանգ

- jaune pâle* - բաց դեղին
- rouge clair* - բաց կարմիր
- noir brillant* - բաց սև
- vert tendre* - բաց կանաչ
- bleu pâle* - բաց կապույտ

Մուգ գուներանգ

- bleu vif* - մուգ կապույտ
- jaune foncé* - մուգ դեղին
- vert profond* - մուգ կանաչ
- noir profond* - մուգ սև
- rouge foncé* - մուգ կարմիր

Վառ գուներանգ

- vert riant* - վառ կանաչ
- rouge ardent* - վառ կարմիր
- jaune gai* - վառ դեղին
- bleu riant* - վառ կապույտ

Այստեղ նշմարելի է ֆրանսերենում փոխաբերական բառագործածության միտումը */riant, tendre, ardent, gai/*:

Երկրորդ ենթախմբում տեղ են գտել այն ենթակարգային գունանունները, որոնց բաղադրիչները կարգայնացնող գունանուններ են և արտահայտում են որևէ գուներանգ՝ առաջացած երկու գույների միախառնումից:

Օրինակ՝

- bleu-vert* - կապտականաչավուն
- rouge-bleu* - կարմրակապույտ
- bleu-noir* - սևակապտավուն
- jaune-rouge* - կարմրադեղին

Այս ենթախումբը բաց համակարգ է և հնարավոր են կարգայնացնող գունա-
նունների ամենատարբեր համադրումներ: Ասվածը վերաբերում է նաև հայերե-
նին:

II խումբ՝ *ածական+գոյական /adjectif + substantif/*

vert-raisin

jaune-canari

bleu-ciel

rouge-sang

blanc-neige

noir-corbeau

Այս խմբում ներառված միավորների հայերեն համարժեքները կարող են ար-
տահայտվել *գոյական+նման+ածական*, *գոյական+պես+ածական* համեմատա-
կան կառույցների միջոցով, քանի որ ֆրանսերենում առկա է ներակա համեմա-
տություն:

Օրինակ՝

noir corbeau - ագռավի նման/պես սև

blanc neige - ձյան նման/պես սպիտակ

rouge sang - արյան նման/պես կարմիր

Որոշ դեպքերում հայերենում գործածվում են նաև հարադիր բարդություն-
ներ, ինչպես օրինակ՝ *վարդագույն*, *երկնագույն*, *ծիրանագույն*, *արևագույն* և
այլն: Ներակա /*implicite*/ համեմատական կառույցներին զուգահեռ ֆրանսերե-
նում հաճախ են գործածվում բացահայտ /*explicite*/ համեմատական կառույց-
ներ, որոնց զգալի մասը ձեռք է բերել կարծրատիպային արժեք և արձանագրվել
բառարաններում:

Օրինակ՝

blanc comme - l'albâtre, la craie, le lait

bleu comme - le ciel, la mer, le saphir

jaune comme - le canari, la paille, le citron

noir comme - le charbon, le cirage, l'encre

rouge comme - la tomate, la pivoine, la pomme

vert comme - l'émeraude, le jade, l'olive

Համեմատական կառույցներում առկա է գունանվանական ածականի իմաս-
տի ուժգնացում: Ինչպես օրինակ՝ *Il est rouge comme une tomate - Il est très rouge*,
Il est blanc comme la neige - Il est très blanc.

Ֆրանսիական մշակույթի գունային արժեհամակարգի տեսանկյունից, հե-
տաքրքիր էր նաև պարզել, թե հիմնականում ինչ առարկաների հետ են արվել
գունային համեմատությունները: Մեր քննության արդյունքում ուրվագծվեց
հետևյալ պատկերը. դրանք հիմնականում այն առարկաներն են, որոնք հաճախ
են հանդիպում առօրյա կյանքում, շրջակա միջավայրում, ինչպես օրինակ՝

մրգեր - citron, cerise, pomme

ծաղիկներ - lis, rose, coquelicot

բանջարեղեն - navet, radis, carotte

հանքանյութեր - jais, charbon, craie

թանկարժեք քարեր - émeraude, saphir

կենդանիներ - corbeau, coq, homard

բնություն- neige, ciel, mer
բնական նյութեր - lait, ivoire, encre
կենցաղային առարկաներ- linge, cirage

Երրորդ գլուխը «Գունանունների և գունանվանական կառույցների իմաստային առանձնահատկությունները լեզվում և խոսքում» բաղկացած է երկու ենթագլխից «Գունանունների և գունանվանական կառույցների իմաստային առանձնահատկությունները լեզվի մակարդակում» և «Գունանունների և գունանվանական կառույցների իմաստային առանձնահատկությունները խոսքի մակարդակում»:

Այս գլխում, մինչև բուն հետազոտությանն անցնելը, անդրադարձ է կատարվում լեզվի մակարդակ/խոսքի մակարդակ եզրերի տարբերակման խնդրին, սույուրյան լեզու-խոսք երկատման հենքի վրա: Մեր ուսումնասիրության սահմաններում խոսքի մակարդակ ասելով՝ նկատի ունենք գունանունների և գունանվանական կառույցների լրացուցիչ հավելիմաստների կիրառությունը տարբեր գործառական ոճերի պատկանող տեքստերում, որոնց ընկալումը մեծապես պայմանավորված է համատեքստով: Հարկ է հաշվի առնել, իհարկե, այն հանգամանքը, որ գունանունների ու գունանվանական կառույցների այն հավելիմաստները, որոնք ամրագրված են բառարաններում և, ըստ էության, լեզվական երևույթներ են՝ կարող են որոշակիորեն նպաստել դրանց համատեքստային իմաստների վերհանմանը խոսքի մակարդակում:

Նման մոտեցումը լայն հնարավորություն է ընձեռում վեր հանելու գունանունների և գունանվանական կառույցների լեզվից խոսք անցման տիրույթում ուրվագծվող իմաստային զարգացումների /նոր հավելիմաստների առաջացման/ միտումները ժամանակակից ֆրանսերենում՝ ելնելով լեզվի մակարդակ եզրի մեր աշխատանքային սահմանումից և հիմք ընդունելով գունանվան հավելիմաստի գործառույթը՝ մեր հետազոտական լեզվանյութը բաշխել ենք հետևյալ խմբերում.

1. **Գունանվան վերաբերյալի իմաստի սաստկացում:** Այս խմբում տեղ են գտել այն գունանվանական կառույցները, որոնցում գունանունները սաստկացնում են վերաբերյալի իմաստը: Նման կառույցների հայերեն համարժեքներում գործածվում են *խորը, սաստիկ, մեծ, խիստ, ծանր* անվանները:

Օրինակ՝

chagrin noir - խորը վիշտ
colère jaune - սաստիկ զայրույթ
peur bleu - մեծ վախ
verte semonce - խիստ նկատողություն
crime noir - ծանր հանցագործություն

Հայերենում նման իմաստային գործառույթ է իրականացնում *սև* գունանունը: Այսպես օրինակ՝ *սև սպերախոտություն* կառույցում գունանունը սաստկացնում է *սպերախոտություն* վերաբերյալի իմաստը /անմարդկային/: Նույն ձևով՝ *սև կատաղություն* - չարագործ, դաժան, անագորույն կատաղություն, *սև սարսափ* - ծայրահեղ սարսափ, ահաբեկություն:

2. **Գունանվան գուգորդային իմաստ:** Մի շարք կառույցներում *սև /noir/* գունանունը գուգորդվում է հոռետեսական, դժբախտ, վատ իմաստներին:

Օրինակ՝

idées noires - հոռետեսական մտքեր
destinée noire - դժբախտ ճակատագիր
noir pressentiment - վատ կանխագգացում
humeur noir - անկումային տրամադրություն
Նույն նյութը հատկանշական է նաև հայերենին.

Օրինակ՝

ul or - չարաղետ օր
ul կողմեր/կյանքի/ - վատ, հոռի, բացասական կողմեր
ul ուժեր - չար ուժեր

3. **Գունանվան հակադիր իմաստ:** *Ul* և *սպիտակ* գունանունները մի շարք կառույցներում մատնանշում են հակադիր իրողություններ, երևույթներ.

Օրինակ՝

marché noir - սև շուկա /ի հակադրություն օրինական շուկայի/
travail noir - ոչ օրինական աշխատանք /ի հակադրություն օրինական աշխատանքի/
mariage blanc - ձևական ամուսնություն /ի հակադրություն օրինական ամուսնություն/
vers blanc - չհանգավորված բանաստեղծություն /ի հակադրություն հանգավորված բանաստեղծության/

4. **Փոխանունություն, փոխաբերություն:** Որոշ գունանվանական կառույցներ արդյունք են բառաստեղծման փոխանունային կամ փոխաբերական մեխանիզմի, ինչպես օրինակ՝

փոխանունություն - *casque bleu* - ՄԱԿ-ի զինվոր, *col bleu* - ազգային նավատորմի զինվոր, *bas bleu* - խելացի կին, *robe noire* - փաստաբան;
փոխաբերություն - *dame blanche* - այրի, *poule blanche* - բախտավոր մարդ և այլն:

Փոխանունային գունանվանական կառույցները հանդիպում են նաև հայերենում, ինչպես օրինակ՝

կարմիր գոզնոց - կին /տան կին/*սև գլուխ* - վարդապետ, հոգևորական, *սպիտակ խալաթավոր* - բժիշկ, *դեղին տուն* - հոգեբուժարան:

5. **Գունանվանական կառույցները հույզերի արտահայտիչ:** Հայտնի է, որ լեզվական միավորները մի կողմից, հույզերի ազդեցության ներքո, կրում են որոշակի իմաստային և շարահյուսական փոփոխություններ, մյուս կողմից՝ նկարագրում են այդ հույզերը, հուզական վիճակները: Այստեղ գունանունների գործածությունը պատկերավորություն է ստեղծում խոսքում՝ ներառելով չափազանցման որոշակի տարրեր¹: Երբ ասում են *Il a rougi* - նա կարմրեց /ամոթից/ ամենևին չի նշանակում, որ ի-

¹ Гак В.Г., Сопоставительная лексикология, М.: «Междунар. отношения», 1977. 264 с.

րականում նա ամբողջովին կարմրեց. որոշակի չափազանցությունը պատկերավորություն է ստեղծում: Նույնը կարելի է ասել ստորև քվարկված գունանվանական կառույցների համար.

noircir - սևացնել /պախարակել, արժանապատվու-

թյան հետ խաղ անել/

être blanc - սպիտակել /վախից, ապրումներից/

être bleu - կապտել /զայրույթից/

être dans le rouge - տազնապալի վիճակի մեջ ընկնել

Խոսքի մակարդակում քննության են ենթարկվել տարբեր գործառական ոճե-
րին պատկանող տեքստերից քաղված այն գունանվանական կառույցները, ո-
րոնք հարաբերականորեն նոր կազմավորումներ են, կամ էլ համոզե են եկել նոր
հավելիմաստներով, ոճական դրսևորումներով: Այսպես, *կանաչ* գունանվան բա-
ռարաններում ամրագրված գրեթե բոլոր հավելիմաստների կենտրոնում *քննու-
թյան զարթոնք* հասկացությունն է, սակայն համատեքստում ձեռք է բերել *վաղ,
երջանիկ, անհոգ, երիտասարդ* հավելիմաստները:

Օրինակ՝

"...dans ma verte jeunesse un grand amour m'a
incendié."

[Colette 1968:174].

"Vous avez été très mince dans vos vertes années,
quand vous n'aviez pas l'argent pour vous ruer sur les
soldats de haute couture..."

[Buron 1998:121].

Բերված օրինակներում *verte* գունանվան հավելիմաստներն են՝ *երիտասարդ
/vertes années - երիտասարդ տարիներ/, վաղ /verte jeunesse - վաղ երիտասար-
դություն/*: Եթե նշյալ կառույցներում, ինչ-որ առումով, առկա է *իմաստային հա-
մաձայնություն*, ապա *la verte vieillesse* կառույցի *vert* և *vieillesse* բաղադրիչների
իմաստները կարծես համադրվում են, և *vert* գունանունը համատեքստում ձեռք է
բերում *ուժերը դեռ չկորցրած, կենսունակությունը պահպանած* հավելիմաստը:

Օրինակ՝

"L'excès de dévotion dont elle avait fait montré dans sa
verte vieillesse était un exorcisme contre cette peur qu'elle
éprouvait déjà"

[Mohrt 1979:65].

Գունանունների նման գործածությունները որպես ոճական դրսևորումներ,
հատուկ են գեղարվեստական տեքստերին, սակայն հանդիպում են նաև դեպքեր,
երբ գունանունը *մուտք է գործում* գիտական տեքստ և *մասնակցում* նոր եզրույ-
թի կազմավորմանը:

Օրինակ՝

"La pédagogie noire, cette façon d'éduquer les
enfants qui prévalent longtemps en Allemagne... il s'agit
de fabriquer l'adulte en réaction... tuer pour survivre"

[Actuel. nov:27].

Գրականագիտական, աստվածաբանական, քաղաքական տեքստերում *սև* և *սպիտակ* գունանունները շատ հաճախ գուգորդվում են լավ/վատ, ազնիվ/անազնիվ հակադիր հասկացություններին՝ ասելիքը դարձնելով ավելի արտահայտիչ:

Օրինակ՝

"Avec quoi un roman est-il fait, sinon avec du mal?
Ôtez le mal, que reste-t-il? Du bien, c'est à dire du *blanc*. Il faut aussi *du noir*"

[Bartoli 1995:39].

"Le Paradis est *blanc*, tout ce qui se rapproche le plus de Dieu... la pureté, la propreté en diffuse également la couleur"

[Batchelor D. 2001:49].

"Un parti est constitué par ses membres. Et tant qu'il y aura un membre malhonnête parmi les membres d'un parti, on pourra l'accuser de "malhonnêteté" ce parti. Conclusion: en attendant que ceux qui y puissent pour s'en mettre les poches soient *blancs*, elles resteront *noires* les caisses de nos représentants"

[Le Monde, 1987:5].

Հրապարակախոսական տեքստերում գունանունները գործածվում են հասարակական վարքի ամբողջական ուղղությունների նկարագրման և արժեքավորման նպատակով:

Օրինակ՝

"Connaissez-vous la théorie des "quatre vagues" qui sont supposées avoir déferlé sur toutes nos sociétés industrielles. C'est une théorie qu'on évoque volontiers à Stockholm: pendant la période d'expansion, il y a eu la vague *rouge* pour exiger une juste répartition des fruits de la croissance. Après s'est installé la fameuse société de consommation, laquelle a suscité la vague *verte* de la part des écologistes qui prenaient la défense de l'environnement. Aujourd'hui déferlerait une vague *bleue*, celle de l'individualisme: du goût du risque et de l'esprit d'initiative pour affronter la crise, et s'amorcerait en même temps une vague *blanche*, sorte de puritanisme contre la drogue, l'alcoolisme, la pornographie et, dans certains pays, contre l'avortement"

[Le Nouvel Observateur, 1985:36].

Այստեղ հարկ է նշել մի կարևոր հանգամանք. գունանունների գործածությունը ոչ գեղարվեստական տեքստում շատ հաճախ ուղեկցվում է համապատասխան բացատրություններով, որոնք էլ, իրենց հերթին, դառնում են տվյալ տեքստի կառուցվածքային առանձնահատկություններից մեկը, ինչպես վերը մեջբերված օրինակում:

Ինչով բացատրել ֆրանսիական լեզվամշակույթում արդեն ավանդույթ դարձած այն միտումը, որ ամենատարբեր ոլորտներում մասնագիտական գործունեության այս կամ այն շրջանը ներկայացվում է գունանվան միջոցով: Նման լեզվամշակույթի ձևավորման գործում, մեր կարծիքով, կարևոր նշանակություն է ունեցել այն, որ Ֆրանսիայում մեծ սեր ու հռչակ վայելող իսպանացի գեղանկարիչ Պաբլո Պիկասոյի գեղանկարչական գործունեության տարբեր շրջաններ կոչվել են գունանուններով՝ կապույտ, կանաչ, վարդագույն: Այս լեզվամշակութային ավանդույթը մուտք է գործել ոչ միայն հասարակական-քաղաքական, այլև՝ գովազդային-տեղեկատվական բնույթի տեքստեր:

Օրինակ՝

"Contrairement aux compagnies de Ferriers qui proposent une myriade de tarifs différents chaque jour /.../ va privilégier la simplicité. A savoir: quatre périodes tarifaires dans l'année /bleu, blanc, rouge et or/ pendant lesquelles le coût de la traversée reste inchangé de jour comme de nuit. Quel que soit le nombre de passagers à bord du véhicule ."

[Le Point, 1994:42].

"Le calendrier comporte trois périodes: *bleue, blanche et rouge*. Choisissez de préférence les jours bleus pour voyager plus confortablement et à des prix particulièrement avantageux"

[Calendrier Voyageurs, 1994].

"Le temps ne vous a pas paru bien long sans entraînement, sans compétitions?

- J'ai fait ma vie tout simplement /.../. J'ai profité de tout. J'ai pris du repos /.../

- Certes, mais au bout du compte, cela fait *deux années blanches* depuis le triomphe d'Atlanta.

Je ne raisonne pas de cette façon. J'ai fait tant de choses dans ma carrière. J'ai eu tant de succès. Qui va se rappeler plus tard que pendant deux ans je n'ai pas couru? Être important? /.../"

[L'Équipe, 1998:9].

Որոշ գունանվանական կառույցներ, որոնք արդեն կարծրատիպային արժեք են ձեռք բերել քաղաքական, հրապարակախոսական տեքստերում, հանդես են գալիս նոր հավելիմաստներով, ինչպես օրինակ *tapis rouge* - դեպի հաղթանակ տանող ուղի.

"Son existence jusqu'alors se présentait comme un *tapis rouge* qui se déroulait peu à peu et ne pouvait en bonne logique la mener qu'à un trône, à un triomphe"

[Vergne A., 1984:105].

agiter le chiffon rouge - վեճ ու կռիվ հրահրել

«*Joséphine agite le chiffon rouge*. Les propos du premier ministre... ont provoqué la colère de l'opposition»

[La Nouvelle République, 2008:3].

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում *կենդանու անուն + գունանուն* կառույցները, որոնցից շատերը բառարաններում ամրագրված լինելով հանդերձ, նոր իմաստային նրբերանգներ են ձեռք բերել համատեքստում, ինչպես օրինակ՝

mouton noir - վտանգավոր մարդ.

"Et quoi qu'il s'en défende, le président de la Lorraine, réélu dans les conditions /.../ troublantes, est regardé comme un *mouton noir* qui devra rendre des comptes à un pouvoir socialiste d'autant plus désemparé qu'il n'avait pas prévu ce cas de figure"

[l'Est Républicain 1992:5].

éléphants blancs - քննադատության թիրախ

"Par ailleurs, se pose toujours un peu plus, devant de pareilles réalisations, la question du bien-fondé de ces "*éléphants blancs*" du développement que sont les grands barrages hydroélectriques. Il est vrai que qu'en ce qui concerne celui de Siadandi, la pression écologique qui les repousse est inférieure à celle qui a retardé celui des Trois-Gorges..."

[Le Monde, 1997:4].

Ատենախոսության եզրակացության բաժնում ի մի են բերվում կատարված ուսումնասիրության արդյունքները:

1. Գիտության հետազոտության օբյեկտների համակարգում մի առանձնահատուկ տեղ է գրավում գույն-գունընկալում-գունանվանում-գունիմաստ բառանդամը, որի բաղադրիչների միջև գոյություն ունի սերտ տարածաժամանակային կապ, մեկի գոյությունը պայմանավորված է մյուսով և կարևոր դերակատարություն ունեն ազգային, պատմամշակութային դիմանկարի կերտման գործընթացում:

2. Նշյալ քառաբաղադրիչ գիտահետազոտական օբյեկտը մի եզակի և յուրօրինակ *տարածք է*, որտեղ խաչաձևվում են մի շարք գիտությունների հետազոտական ուղիներ, որոնցից առավել հիմնարարները կարելի է համարել փիլիսոփայությունը /գույնը աշխարհընկալման արժեքային համակարգի ձևավորման կարևորագույն տարրերից է .../, բնագիտությունը /լայն առումով, գույները տարբեր երկարության գունային ալիքներ են.../, կենսաբանությունը /գույների ընկալումը պայմանավորված է մարդու կենսաբանական մեխանիզմներով .../ և վերջապես լեզվաբանությունը /գունանունների և գունանվանական կառույցների համակարգ, խորհրդանշանային և գուգորդային իմաստներ .../:

3. Հիմնական գունանունները /սև, սպիտակ, կարմիր, կանաչ, կապույտ, դեղին/ հանդես են գալիս որպես վերացական հասկացություններ /կադապարներ/ իրենց մեջ հավաքագրելով տվյալ գույնի էութենական հատկանիշները, իսկ իրականում մենք տարբերակում ենք միայն դրանց երանգները: Հիմնական գունանունները կարելի է դիտարկել որպես կարգայնացնող բառամիավորներ, իսկ տվյալ գույնի երանգները նշող միավորները՝ ենթակարգային:

4. Ամեն մի հիմնական գունանուն կարող է դիտարկվել որպես կոնցեպտ, կամ էլ դառնալ մեկ այլ կոնցեպտի բաղկացուցիչ մաս. ինչպես օրինակ, *առասպելը, կրոնը, պետությունը, սովորույթը, կենցաղը*: Նշյալ կոնցեպտներում առավել մեծ հաճախականությամբ հանդես են գալիս *noir, blanc, rouge et vert* գունանունները:

5. Գունընկալումը լեզվահոգեբանորեն տեղի է ունենում որևէ կոնկրետ առարկայի *միջնորդությամբ*: Միջնակության հաղորդակցության տեսանկյունից կարգայնացնող գունանունների ընկալումը կապված է որոշակի դժվարությունների հետ, քանի որ դրանց բովանդակային պլանն ունի ազգամշակութային պատկանելություն: Համարժեք ընկալման և թարգմանության տեսանկյունից դժվարություններ են հարուցում մաս ֆրանսերենի ենթակարգային բազմաբարդ գունանունները, որոնք հայերեն կարող են թարգմանվել *գոյական+մասն+ածական, գոյական+պես+ածական* համեմատական կառույցների միջոցով:

6. Ֆրանսերենում առկա է փոխադարձ կապ գունանվան իմաստի և շարահյուսական դիրքի միջև:

7. Իմաստաձևաբանական առանձնահատկություններով է պայմանավորված հավելյիմաստների առկայությունը գունանվանական կառույցներում: Իմաստաձևաբանական տեսանկյունից բազմաբարդ գունանունները արտահայտում են՝

ա) տվյալ գույնի եռաստիճան երանգներից մեկը՝ համապատասխան ածականի համադրմամբ,

բ) որևէ գուներանգ երկու գունանունների համադրմամբ,

գ) գուներանգ համապատասխան գոյականի համադրմամբ:

8. Ֆրանսերենում գունային եռաստիճանության արտահայտման համար գործածվում են ավելի մեծ թվով անականներ, քան հայերենում, ընդ որում, դրանց զգալի մասը փոխաբերական իմաստներով:

9. Ավելի հստակ պատկերացում կազմելու համար գունանվանական կառույցների իմաստների հարազարգացման մասին, մենք խնդրո առարկա լեզվամիավորները հետազոտել ենք ինչպես լեզվի, այնպես էլ խոսքի մակարդակում.

լեզվի մակարդակում արձանագրել ենք հետևյալ իմաստային գործառույթները.

- *վերաբերյալի իմաստի սաստկացում*

- *գունանվան գուգորդային իմաստ*

- *գունանվան հակադիր իմաստ*

- *փոխաբերություն, փոխանունություն*

- *հուզական արտահայտչականություն*

Խոսքի մակարդակում ի հայտ են եկել նոր գունանվանական կառույցներ, իսկ լեզվում ամրագրված գունանվանական կառույցները ձեռք են բերել նոր հավելյիմաստային նրբերանգներ, որոնց ծնունդը պայմանավորված է հիմնականում սոցիալ-մշակութային կյանքում տեղի ունեցած բարեփոխումներով, գիտատեխնիկական առաջընթացով: Այդ իսկ պատճառով գունանվանական նոր հավելյիմաստները առավել հաճախ հանդիպում են քաղաքական, գիտական և հրապարակախոսական տեքստերում:

Աշխատանքի քննարկումը և հրապարակումները

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ-ի ֆրանսիական բանասիրության ամբիոնի նիստում:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Հարությունյան Ա. *Աշխարհի գունային պատկերի արտացոլումը լեզուներում* // Ֆրանսիական բանասիրության և ֆրանսերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի, դասավանդման արդիական խնդիրներ (Գիտական հոդվածների ժողովածու),

ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, 2011, էջ 46-50:

2. Հարությունյան Ա. *«Գույն» հասկացության գիտական ըմբռնման հարազարգացումը* // Կանթեղ, Գիտական հոդվածներ,

Աստղիկ, Երևան, 2013, էջ 109-114:

3. Հարությունյան Ա. *Գունանունների դասակարգումը իմաստաշարահյուսական տեսանկյունից* // Ռոմանական բանասիրության հանդես,

Բլանկիրատ, Երևան, 2013, N10, էջ 152-158:

4. Հարությունյան Ա. *Գունանունների իմաստային կառուցվածքը և պատճառաբանվածությունը* // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում (Foreign Languages at Higher Education) , ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, 2014, N1, էջ 65-71:

AMALIA R. HAROUTYUNYAN

Linguistic Manifestation of the Semantics of Color in Modern French

Summary

The present paper is devoted to a detailed study of one of the most important problems of modern linguistic science – linguistic features of manifestation of the semantics of color in the French language both on the emic and the etic levels. The study on the emic level is parallel with the similar phenomena of the Armenian language.

The paper **aims at** revealing the additional expressive-emotional-evaluative overtones in French colour terms and colour constructions as elements of the French language system and their actualization in speech.

The research **material** picked out from different French and Armenian dictionaries and texts with various functional orientations provide the possibility of achieving reliable results in our investigation.

From the **methodological** point of view the present research is based on the theoretical statements of praxematics, pragmalinguistics, cognitive and contrastive linguistics.

The **novelty** of the research consists in overall study of colour terms and constructions, the study of their semantic structures, their etymology and their morphosyntactic peculiarities. New is also our attempt to present a morphosemantic classification of colour terms.

The **theoretical** value of the research is conditioned by the role the achieved results may have in the future development of the theories of lexicology and lexicography. Of theoretical significance is also the classification of color terms in French based on their semantic-morphological peculiarities.

The **practical** sphere of application of the results is rather wide: comparative lexicology, culture studies, theory and practice of translation. They can also be productively used in lexicographic practice and be included into the teaching programmes of the French language. Textbooks and manuals can be compiled based on the language material discussed and analysed in the present paper.